ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

# ARMENIAN STUDIES TODAY AND DEVELOPMENT PERSPECTIVES

**Միջազգային համաժողով**
**Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.**
**International Congress**
**Yerevan, September 15-20, 2003**

**Զեկուցումների ժողովածու**
**Collection of papers**

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՆ

*Նիկոլայ Հովհաննիսյան*
*Հայաստան*

Հայաստանի միջազգային համակարգի գործոն լինելու հանգամանքը կապված է ստրատեգիական բնույթի այն փոփոխությունների հետ, որոնք տեղի ունեցան XX դարի 90-ական թվականներին-XXI դարի սկզբներին: Նկատի ունենք սառը պատերազմի ավարտը, Խորհրդային Միության փլուզումը, բազմակենտրոն աշխարհի վերածումը միակենտրոնի, խորհրդային տարածքում նոր, անկախ պետությունների ձևավորումը և այն:

Նորանկախ պետությունների շարքը համալրեց նաև Հայաստանը, որը միջազգային ասպարեզում որպես ինքնիշխան պետություն հայտնվեց 1991թ. սեպտեմբերի 21-ին: Դա հայ ժողովրդի համար ոչ թե ձևական բնույթ կրող իրադարձություն էր, այլ պատմական կարևոր նշանակություն ունեցող երևույթ, որն իր հետ բերեց բազում նոր հիմնախնդիրներ, այդ թվում և կապված միջազգային հարաբերությունների հետ:

Միջազգային հարաբերությունների ասպարեզում իր ողջ սրությամբ Հայաստանի Երրորդ հանրապետության առջև կանգնեց այն հարցը, թե նա ի՞նչ դերակատարում կարող է ունենալ ժամանակակից աշխարհում, ո՞րն է նրա տեղն ու դերը մոտ 200 պետություններից կազմված միջազգային համագործակցության մեջ: Այլ կերպ ասած, արդյո՞ք Հայաստանն իրենից ներկայացնում է որոշակի գործոն, թե՞ ոչ: Այս հարցում միասնական տեսակետ գոյություն չունի: Ոմանք անգամ գտնում են, թե քանի որ Հայաստանը փոքր հանրապետություն է և հարուստ չէ բնական հանածոներով, ուստի հազիվ թե արդարացված լինի խոսել Հայաստանի մասին որպես միջազգային գործոնի: Այս տեսակետը քննադատության չի դիմանում և ընդունելի չէ:

Նշենք նաև, որ գործոնի հարցը կամ միջազգային հարաբերություններում այս կամ այն պետության տեղի ու դերի հարցը, կանգնեց առանց բացառության բոլոր նախկին խորհրդային և արևելաեվրոպական հանրապետությունների առջև, և դա բնորոշ չէ միայն Հայաստանի Երրորդ հանրապետությանը: Սակայն նրանցից յուրաքանչյուրն այդ հարցը լուծում է յուրովի, ելնելով իր պատմական ժառանգությունից, հնարավորություններից, տնտեսական ու քաղաքական ներուժից, աշխարհագրական դիրքից, քաղաքական շրջապատից և այլ հանգամանքներից:

Այս տեսակետից մոտենալով արծարծվող հարցին, մեր ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որը Հայաստանը որոշակի գործոն է, որը նա իրականացնում է աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկ), ռազմաքաղաքական, կոմունիկացիոն-տնտեսական մակարդակներով: Նրա՝ որպես գործոնի նշանակությունը, կարևորում է նաև Սփյուռքի գոյությունը:

Համառոտակի կանգ առնենք այդ հարցերի լուսաբանության վրա:

**Նախ, աշխարհաքաղաքական գործոնի հարցը:**

Խորհրդային Միության լուծարումից հետո, լայն հնարավորություններ ստեղծ-
վեցին մի շարք պետությունների համար Անդրկովկաս ներթափանցելու և այդ տա-
րածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու համար: Այդ նպատակով բացահայտ
պայքար ծավալվեց Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, ապա նաև ԱՄՆ-ի և
Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների միջև: Սակայն գլխավոր դերակատար-
ները, այնուամենայնիվ, հանդիսանում են Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, ո-
րոնք անմիջապես սահմանակից են Անդրկովկասին և առավել շահագրգռված են
Անդրկովկասում տիրապետող դիրքեր գրավելու հարցում: Այդ քաղաքական նպա-
տակների իրագործման համար նրանք կարիք ունեն հաստատելու սերտ բարեկա-
մական հարաբերություններ անդրկովկասյան հանրապետությունների հետ:

Ռուսաստանի համար, քաղաքական որոշ իրողությունների հետևանքով, ստրա-
տեգիական գործոն դարձավ Հայաստանը: Բայց դա չի նշանակում, թե Ռուսաս-
տանը կամավոր ընտրություն կատարեց հօգուտ Հայաստանի, հրաժարվելով վրա-
ցական կամ ադրբեջանական գործոնից: Ռուսաստանն, անկասկած, կցանկանար
օգտագործել այդ երկու գործոնները ևս: Սակայն դա չստացվեց, քանի որ Վրաս-
տանը և Ադրբեջանը գրավեցին հակառուսական դիրքորոշում, որը երբեմն հաս-
նում էր թշնամության աստիճանի:

Այդ ժամանակաշրջանում դրված էր Անդրկովկասում Ռուսաստանի մնալ-չմնա-
լու հարցը: Եվ ստրատեգիական այդ կարևոր խնդիրը Ռուսաստանին հաջողվեց
դրականորեն լուծել շնորհիվ հայկական գործոնի: Ռուսաստանի և Հայաստանի
միջև հաստատվեցին բարեկամական և ստրատեգիական հարաբերություններ, ո-
րոնք դաշնակցային բնույթ են կրում: Իսկ դա իր հերթին բարձրացրեց հայկական
գործոնի կշիռը և Հայաստանի նշանակությունը Ռուսաստանի աչքում: Հենվելով
հայկական գործոնի վրա, Ռուսաստանը կարողացավ ապահովել իր ներկայութ-
յունն Անդրկովկասում, որի հետևանքով ձախողվեցին Ռուսաստանն Անդրկովկա-
սից դուրս մղելու ԱՄՆ-ի, Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ծրագրերը: Ռու-
սաստանի դուրս մղումն Անդրկովկասից զգալիորեն կփոխեր ստրատեգիական ի-
րադրությունն Անդրկովկասում՝ ի վնաս Հայաստանի:

Հայ-ռուսական մերձեցումը և համագործակցությունը ստացվեց նաև այն պատ-
ճառով, որ դա համապատասխանում է Հայաստանի ազգային-պետական շահե-
րին, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծում Հայաստանի ազգային անվտան-
գության համար, կանխում կամ չեզոքացնում Հայաստանի համար վտանգավոր
քաղաքական կոմբինացիաները, նպաստում քաղաքական կայունության հաստատ-
մանը Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևելքում:

Հայկական գործոնի նշանակությունը կարևոր է նաև Անդրկովկասում Իրանի քա-
ղաքականության մեջ: Անդրկովկասում բավականին բարդ իրադրություն է ստեղծ-
վել Իրանի համար: Ավանդաբար այստեղ պայքար է ընթանում Իրանի և Թուրքիա-
յի միջև: Խիստ լարված են հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Իրանը չի կարող
հենվել Ադրբեջանի վրա, քանի որ ադրբեջանական գործոնն ի նպաստ Թուրքիայի
է: Մյուս կողմից, ադրբեջանական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջաններում
փայփայում են «Մեծ Ադրբեջանի» ստեղծման ծրագիրը, որը նախատեսում է Իրա-
նի Հյուսիսային Ադրբեջան կոչվող տարածքը միացնել Ադրբեջանի հանրապետութ-
յանը (Բաքու):

Իրանը չի կարող հենվել նաև վրացական գործոնի վրա, քանի որ Վրաստանն
իր հարաբերություններում նախապատվությունը տալիս է Թուրքիային և Ադրբե-
ջանին:

Այսպիսի պայմաններում Իրանի համար մեծ նշանակություն ձեռք բերեց հայ-
կական գործոնը: Իրանի և Հայաստանի միջև հաստատվեցին նրանց ազգային-
պետական շահերին համապատասխանող բարիդրացիական հարաբերություններ,
որի շնորհիվ Իրանը կարողացավ ապահովել իր ներկայությունն Անդրկովկասում,
ազդել Անդրկովկասում քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա, խոչընդոտել
թուրքական ազդեցության ուժեղացմանը և այլն: Իսկ Հայաստանը կարողացավ
Իրանի հետ համագործակցելու ուղիով զգալիորեն մեղմացնել թուրք-ադրբեջա-
նական շրջափակման հետևանքները: Իրանական միջանցքը Հայաստանի համար
դարձավ կարևոր ելք դեպի արտաքին աշխարհ:

Այսպիսով, հայկական գործոնը վճռական դեր է խաղում Ռուսաստանի և Իրանի
Անդրկովկասյան քաղաքականության մեջ և տարածաշրջանում ուժերի նոր հավա-
սարակշռության ձևավորման գործում:

Հայկական գործոնը նշանակություն ունի նաև Վրաստանի համար՝ նրա տա-
րածքային ամբողջականությունը պահպանելու տեսակետից: Հայտնի է, որ Աբխա-
զիան և Հարավային Օսեթիան փաստորեն գտնվում են Թբիլիսիի վերահսկողութ-
յունից դուրս: Հայտնի է նաև, որ որոշակի հիմնախնդիրներ գոյություն ունեն նաև
հայերով բնակեցված Ջավախքում: Կարելի է ասել, որ իրական վտանգ գոյություն
ունի Վրաստանի տերիտորիալ ամբողջականության պահպանման խնդրում: Նման
արտակարգ բարդ իրավիճակում կարևորվում է հայկական գործոնի նշանակութ-
յունը՝ կապված այն բանի հետ, թե ինչպիսի դիրք է գրավում Հայաստանը Ջավախ-
քի հարցում: Հայաստանի ղեկավարությունը բազմիցս հավաստել է, որ Հայաստա-
նը որևէ տերիտորիալ պահանջ չունի Վրաստանից և հարգում է նրա տերիտորիալ
ամբողջականությունը: Վստահաբար կարելի է ասել, որ հայկական գործոնն իր
որոշակի ներդրումն ունի Վրաստանի միջէթնիկական բախումները կանխելու և տե-
րիտորիալ ամբողջականությունը պահպանելու գործում:

Հայաստանն իր հերթին շահում է հայ-վրացական բարեկամական հարաբերութ-
յունների պահպանումից և խորացումից:

Կարելի է ասել, որ Ռուսաստանի, Իրանի և Վրաստանի առնչությամբ հայկա-
կան գործոնն իրականացնում է կառուցողական՝ կոնստրուկտիվ ֆունկցիա, և որ-
պես այդպիսին նպաստում է կայունության ու համագործակցության հաստատմա-
նը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջա-
նում:

Այլ, յուրահատուկ դերակատարում ունի հայկական գործոնը Թուրքիայի և Ադր-
բեջանի հետ փոխհարաբերություններում: Թուրքիայի և Ադրբեջանի դեպքում հայ-
կական գործոնը իրականացնում է կանխարգելիչ կամ զսպիչ ֆունկցիա, որը պայ-
մանավորված է Հայաստանի նկատմամբ թուրքական այդ երկու պետությունների
թշնամական քաղաքականության հետ: Թուրքիան շրջափակման է ենթարկել
Հայաստանը և իր հետ հարաբերությունները կարգավորելու համար Հայաստանին
երեք նախապայման է առաջադրում՝ հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տերիտո-
րիալ պահանջներից, Թուրքիային մեղավոր չճանաչել հայոց ցեղասպանության
հարցում և չպաշտպանել Ղարաբաղը այն պայքարում, որ նա մղում է հանուն իր
ազատության և իրավունքների: Հայաստանը մերժում է այս բոլոր նախապայման-
ները, և Թուրքիան ոչինչ չի կարողանում անել վերացնելու կամ նվազեցնելու հայ-
կական գործոնի նշանակությունն այս հարցերում: Ընդհակառակը, հայկական գոր-
ծոնը վճռական դեր է խաղում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և
Ղարաբաղի ազգային անվտանգության ապահովման գործում:

Ասվածին պետք է ավելացնել նաև այն կարևոր դերակատարումը, որ հայկա-
կան գործոնն ունի պանթուրքիզմի քաղաքականության իրականացումը ձախողութ-
յան մատնելու գործում: Հայկական գործոնը կանգնած է պանթուրքիզմի քաղա-
քականության ճանապարհին, որը մեծ վտանգ է ներկայացնում ոչ միայն հայերին
և Հայաստանին, այլև Ռուսաստանին, Իրանին, արաբական երկրներին և այլ ժողո-
վուրդների: Եվ պանթուրքիզմի ջատագովների բոլոր սերունդներին մինչև օրս չի
հաջողվել հաղթահարել պանթուրքիզմի ճանապարհին կանգնած հայկական պատ-

նեշը:

Հայկական գործոնը, ինչպես նշվեց, կանխարգելիչ առաքելություն է իրագործում նաև Ադրբեջանի նկատմամբ՝ կապված առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հետ: Արցախահայերի տպավորիչ ռազմական հաղթանակները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորումը, նրա de facto անկախ կարգավիճակը և այլն, ուղղակիորեն կապված են հայկական գործոնի, Հայաստանի Հանրապետության գոյության, օգնության և պաշտպանության հետ: Շնորհիվ դրա, ձախողվեցին Ադրբեջանի բոլոր փորձերը կրկին իր տիրապետությունը հաստատելու Ղարաբաղի վրա:

Հայկական գործոնի ֆունկցիոնալ բաժանումը կառուցողականի և կանխարգելիչի պայմանական է: Հայկական գործոնը, նրա նշանակությունը և դերը, նրա ազդեցության աստիճանն իրականում պետք է դիտարկել իր ամբողջության մեջ: Իսկ այդ դեպքում, համոզված կարելի է ասել, որ հայկական գործոնը որպես անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական բաղադրատարր, բնավ էլ արհամարհելի չէ:

Այդ հանգամանքը հիանալի են գիտակցում Եվրամիության մեջ միավորված երկրները և ԱՄՆ-ը: Նրանք կարևորում են ինչպես առանձին-առանձին վերցրած հայկական և համապատասխանաբար վրացական ու ադրբեջանական գործոնները, այնպես էլ Հարավային Կովկասն ամբողջությամբ վերցված:

Եվրախորհրդի համար Հարավային Կովկասը բնական կամուրջ է, որը Եվրոպան ամենակարճ և ամենահարմար ճանապարհով կապում է Մերձավոր ու Միջին Արևելքի, Կասպիական ավազանի և հարավարևելյան Ասիայի հետ: Ուստի նա շահագրգռված է, որ այս տարածաշրջանում լինի կայունություն, զարգանան ազատ, շուկայական հարաբերությունները, հաստատվեն քաղաքացիական հասարակություններ և ընդունվեն եվրոպական արժեքները:

Այս տարածաշրջանի կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2004թ. հունիսի 14-ին Եվրախորհրդի Ընդհանուր հարցերի և արտաքին քաղաքականության Խորհուրդը Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկեց «Ընդարձակ Եվրոպա: Նոր Հարևաններ» ծրագրի մեջ:

Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքականության մեջ քաղաքական և տնտեսական առումներով մեծ նշանակություն է տալիս հարաբերությունների զարգացմանը Եվրախորհրդի հետ և նրա գերակա նպատակներից մեկը ԵՄ անդամ դառնալն է:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նրա հետաքրքրությունը Հայաստանի Հանրապետությունը և, ամբողջությամբ վերցրած, Անդրկովկասի նկատմամբ, կարծում ենք, ավելի շատ աշխարհաքաղաքական է, որը սերտորեն աղերսվում է Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում նոր ձևավորվող «Մեծ Մերձավոր Արևելքի» և Եվրասիական տարածքի կազմավորման ծրագրերի հետ: Ստրատեգիական բնույթի այդ ծրագրերի իրականացման մեջ ԱՄՆ-ը նշանակալի տեղ է հատկացնում Հայաստանին՝ մանավանդ հայ-թուրքական, հայ-ռուսական հարաբերությունների և հարակից այլ հարցերի առումով:

**Հայաստանի Հանրապետությունը նաև տարածաշրջանային նշանակալի ռազմաքաղաքական դերակատարում ունի:** ՀՀի ռազմական ներուժը, ճիշտ է, սահմանափակ է, եթե համեմատելու լինենք Թուրքիայի և Իրանի հետ: Բայց, այդուհանդերձ, նրա զինված ուժերը ԼՂՀ-ի բանակի հետ միասին, այսօր ամենահզորն են Անդրկովկասում: Եվ տարածաշրջանի երկրները, կամա թե ակամա, հարկադրված են հաշվի նստել դրա հետ: Այս հանգամանքը հայկական գործոնին տալիս է անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանում կայունությանը նպաստող ֆունկցիա, մանավանդ, եթե հաշվի առնենք Լեռնային Ղարաբաղի խնդրի չկարգավորված լինելու հանգամանքը:

Հայկական ռազմաքաղաքական գործոնի կարևորությունն առաջինն ըստ արժանվույն գնահատեց Ռուսաստանը, որը դիմեց մի եզակի քայլի. 1997թ. օգոստոսի 29-ին Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր»: Հայաստանը միակ երկիրն է, որի հետ Ռուսաստանը կնքել է նման պայմանագիր, որի համաձայն, կողմերը պարտավորվում են միմյանց ցույց տալ անհրաժեշտ ռազմական օգնություն՝ կողմերից մեկի դեմ որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից ագրեսիայի դեպքում: Հայ-ռուսական ռազմական համագործակցության կարևոր օղակն է հանդիսանում Հայաստանի կողմից Ռուսաստանին ռազմական բազա տրամադրելը: Եվ, վերջապես, Հայաստանը Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի և Ղրղզստանի հետ միասին մտնում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մեջ: Ընդ որում, Ռուսաստանի և Հայաստանի վրա է դրված այդ երկրների հարավային ստրատեգիական ուղղության անվտանգության ապահովման պատասխանատվությունը:

Ռուս-հայկական ռազմական համագործակցությունը, լինելով Ռուսաստանի կողմից հայկական ռազմական գործոնի կարևորության ճանաչման արտահայտություն, ինքնին ավելի է արժեքավորում և բարձրացնում Հայաստանի ստրատեգիական նշանակությունը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում:

Հայկական գործոնի ռազմաքաղաքական ասպեկտի մյուս կարևոր ոլորտը Ղարաբաղյան կոնֆլիկտը և հայ-ադրբեջանական ռազմական առճակատումն են: Հենց այս բնագավառում փայլուն կերպով դրսևորվեցին այդ գործոնի հնարավորությունները և բացառիկ կարևորությունը Հայաստանի Հանրապետությունն և Ղարաբաղի պաշտպանության ու ազգային անվտանգության ապահովման գործում: Իսկ դա բնավ էլ դյուրին գործ չէր: Հայկական ռազմական ուժերը ջախջախիչ պարտության մատնեցին ադրբեջանական բանակին, որի թիկունքում կանգնած էր Թուրքիան: Ադրբեջանական ուժերի պարտությունը ռազմի դաշտում պայմաններ ստեղծեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության կազմավորման համար:

Շնորհիվ հայկական ռազմական գործոնի, Ադրբեջանը ձեռնպահ է մնում ղարաբաղյան կոնֆլիկտը ռազմական ճանապարհով լուծելուց : Ճիշտ է, այժմ, Հեյդար Ալիևի մահվանից և նրա որդու՝ Իլհամ Ալիևի պրեզիդենտ դառնալուց հետո, Ադրբեջանից ձայներ են լսվում պատերազմական ուղիով Ղարաբաղի խնդիրը լուծելու վերաբերյալ, սակայն նորընծա պրեզիդենտը լավ է գիտակցում, որ դա կապված է անկանխատեսելի հետևանքների հետ: Ադրբեջանի նոր ղեկավարությունը քաջատեղյակ է հայկական բանակի ռազմական հզորության և ներուժի մասին: Եվ եթե նա դույզն ինչ վստահ լիներ, որ պատերազմը կարող է հաղթական վախճան ունենալ Ադրբեջանի համար, ապա վաղուց այդ քայլին դիմած կլիներ:

Հայկական ռազմական գործոնն Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի կարևոր իրողություններից է, որը հաշվի են առնում Հայաստանի բոլոր անմիջական ու մերձակա հարևանները: Եվ ոչ միայն նրանք:

Հայաստանի հետ ռազմական համագործակցությունը զարգացնելու հարցում շահագրգռված են նաև ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն: Վերջին շրջանում այդ բնագավառում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր: Պահպանելով ստրատեգիական համագործակցությունը Ռուսաստանի և Հավաքական անվտանգության պաշտպանության կազմակերպության անդամ երկրների հետ, Հայաստանը, ղեկավարվելով կոմպլեմենտար՝ փոխլրացման քաղաքականության սկզբունքներով, ինքը նույնպես շահագրգռված է իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ խորացնելու մեջ: Մեր ժամանակներում կոպիտ սխալ կլիներ անտեսել աշխարհի այդ երկու ամենահզոր ուժերը:

Հայաստանն ԱՄՆ-ի հետ համագործակցում է ինչպես երկկողմանի հարաբերութ-

յունների հիմքի վրա, այնպես էլ ՆԱՏՕ-ի շրջանակներում: Հայաստանը ՆԱՏՕ-ի «Գոր-
ծընկերություն հանուն խաղաղության» և այլ ծրագրերի անդամ է, մասնակցում է
նրա «Լավագույն ջանքեր» ծրագրին: Հայկական ռազմական ուժերն առաջին ան-
գամ այդ ծրագրի շրջանակներում 2002թ. մասնակցեցին Վրաստանում կայացած
ՆԱՏՕ-ի անդամ երկրների ռազմական վարժություններին, իսկ 2003թ. նման ռազ-
մական վարժություններ տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության տարած-
քում, որին մասնակցում էին ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Հունաստա-
նի, Իտալիայի և այլ երկրների զորաջոկատները: Ներկա էին նաև թուրքական բա-
նակի սպաները: Եվ, վերջապես, հայկական.ռազմաջոկատը հունական գումարտա-
կի կազմում մասնակցում է Կոսովոյում ՆԱՏՕ-ի խաղաղապահպան գործողություններ-
ին:

Այս պարագան, անշուշտ, ընդգծում է հայկական ռազմական գործոնի էական
նշանակությունը: Եվ այդ առումով, այսինքն համագործակցության ծավալներով,
Հայաստանը չի զիջում Վրաստանին ու Ադրբեջանին, միայն մի տարբերությամբ,
որ նրանք շատ են աղմկում ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ իրենց ռազմական համագոր-
ծակցության մասին: Սակայն կա մի էական տարբերություն: Վրաստանը և Ադրբե-
ջանը պաշտոնապես հայտարարում են ՆԱՏՕ-ին անդամակցելու իրենց մտադրութ-
յան մասին, մինչդեռ այդ հարցը չկա Հայաստանի արտաքին քաղաքականության
օրակարգում: Թեև չպետք է բացառել, որ համաշխարհային իրադրությունը կարող
է այնպես փոխվել և գլոբալ մասշտաբներով ուժերի այնպիսի հարաբերակցություն
հաստատվի, որ Հայաստանի Հանրապետությունը հարկադրված լինի վերանայելու
իր մոտեցումն այդ խնդրի նկատմամբ:

**Հայկական գործոնը դրսևորվում է նաև կոմունիկացիոն մակարդակով:** Դա
առաջին հերթին պայմանավորված է այն աշխարհագրական դիրքով, որ Հայաս-
տանը գրավում է Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում, այդ երկու ենթատարա-
ծաշրջանների հատման գծում: Համանման դիրքեր են գրավում նաև Վրաստանը և
Ադրբեջանը: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք:

Առաջին, Հայաստանն ավելի նախընտրելի է Հյուսիս-Հարավ ստրատեգիական
կոմունիկացիայի առումով, որն արդյունք է ստեղծված քաղաքական իրողության:
Վրաստանն ու Ադրբեջանն ավելի են կողմնորոշվում դեպի Թուրքիան և ավելի
նախընտրելի են Արևելք-Արևմուտք ստրատեգիական կոմունիկացիայի տեսանկ-
յունից: Մինչդեռ Հայաստանը, որն ավելի լավ հարաբերություններ ունի Ռուսաս-
տանի և Իրանի հետ, դարձել է Հյուսիս-Հարավ գծի կարևոր օղակ: Եվ քանի որ այդ
գիծը շարունակություն ունի հյուսիսից դեպի Եվրոպա, իսկ հարավից՝ Արաբական
Արևելք և Պարսից ծոց, ապա դրանով ավելի է կարևորվում հայկական գործոնը:

Երկրորդ, Հայաստանի աշխարհագրական դիրքն ավելի նպաստավոր է Հյու-
սիս-Հարավ հաղորդակցման իրականացման առումով:

Սակայն անդրկովկասյան երեք հանրապետությունների համար ընդհանուրն այն
է, որ նրանք հանդիսանում են տարանցիկ կոմունիկացիաների խաչմերուկ, որը ցա-
մաքային, օդային և ջրային ճանապարհներով Եվրոպան կապում է Կասպիական
ավազանի, Մերձավոր Արևելքի և նրա միջոցով Աֆրիկայի հետ: Ուստի, այդ ընդ-
հանուր տարանցիկ ճանապարհի բաժանումը Հյուսիս-հարավ և Արևելք-Արևմուտք
հատվածների, ավելի շատ քաղաքական շահերի և հակասությունների արդյունք է,
քան թե տնտեսական պահանջ: Մեր կարծիքով, այս երևույթը ժամանակավոր բնույթ
է կրում:

Մեզ համար կարևորը տվյալ պարագայում այն է, որ Հայաստանը հանդիսա-
նում է անժխտելի գործոն հաղորդակցման առումով, որն անտեսելու փորձերը դա-
տապարտված են ձախողման:

Հայկական գործոնը՝ նրա ազդեցության ուժեղացման առումով, ունի սնուցման
մի լրացուցիչ աղբյուր, որից զուրկ են մյուս երկրները: Դա հայ Սփյուռքն է:

Հայկական 5-6 միլիոնանոց Սփյուռքը կարևոր դեր է խաղում այնպիսի երկրնե-
րում, ինչպես ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Լիբանանը, Վրաստանը, Հունաս-
տանը, Իրանը և այլն, որը զգալիորեն ազդում է հիշյալ և այլ երկրների քաղաքա-
կանության վրա՝ կապված Հայաստանին առնչվող քաղաքական, ռազմական, ֆի-
նանսական, տնտեսական և մշակութային հարցերի հետ: ԱՄՆ-ում և Ֆրանսիայում
գոյություն ունի կազմակերպված հայկական լոբբի, նման միտումներ են դրսևոր-
վում նաև Ռուսաստանում: Լիբանանի պառլամենտում 6 տեղ պատկանում է հայ
համայնքին, որին պատկանում է նաև 1-2 մինիստրական պաշտոն Լիբանանի կա-
ռավարության մեջ: Հայերը պառլամենտական տեղեր են զբաղեցնում նաև Կանա-
դայում, Ուկրաինայում, Սիրիայում, Իրանում, Կիպրոսում, Բուլղարիայում և այլ
երկրներում: Նրանց դերը մեծ է եղել մի շարք երկրների կողմից հայոց ցեղասպա-
նությունը ճանաչելու գործում:

Սփյուռքի գործոնը կազմում է հայկական գործոնի օրգանական մասը, որն ա-
վելի է շեշտում համահայկական գործոնի կարևորությունը:

Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ հայկական գործոնի դե-
րը միտումներ ունի ուժեղանալու Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևել-
քում: